

Արթուր ՂԱՄԱՐՅԱՆ
Հայ-ռուսական համալսարանի պետության և
իրավունքի տեսության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՕՏԱՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՏՐԱԺԱՐՈՒՄԸ (ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՄՊԵԼ, ԹԵ ԽԱՔԿԱՆՔ)

Ընդհանուր դրույթներ: Հիմնական իրավունքներից հրաժարվելու տեսության համար մարդու իրավունքների անօտարելի լինելու հարցն ունի սկզբունքային նշանակություն, քանի որ իրավունքից հրաժարվելու թույլատրելիության կամ դրա սահմանների հարցը կախված նրանից, թե ինչպես է ընկալվում «անօտարելի իրավունք» հասկացությունը և ում է այն հասցեագրված:

Ֆեոդալական կարգերի դեմ պայքարի ժամանակաշրջանում առաջ քաշվեցին մարդասիրական նշանակության մի շարք գաղափարներ՝ սահմանադրականությունը, ժողովրդի ինքնիշխանությունը, իշխանությունների տարանջատումը, ինչպես նաև մարդու անօտարելի բնական իրավունքների տեսությունը: Մարդու իրավունքների անօտարելի լինելու կարգախոսով հեղափոխական բուրժուազիայի ներկայացուցիչները հանդես էին գալիս բացարձակ միապետերի, միջնադարյան եկեղեցու դեմ: Ինչպես նկատում ենք, այդ ժամանակաշրջանում մարդու բնական իրավունքները հռչակվեցին որպես անօտարելի իրավունք, որը հետագայում արտացոլվեց նաև պետական ու միջազգային մի շարք փաստաթղթերում: Այսպես՝ 10.12.1948 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում նշված է. «Մարդիկ ծնվում են ազատ, հավասար, իրենց արժանապատվությանը ու իրավունքներով, և մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու **անօտարելի իրավունքների** ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն

է» (ընդգծումը՝ Ա. Ղ.):
Իրավունքի տեսության մեջ նշվում է, որ ի տարբերություն պոզիտիվ իրավունքի, բնական իրավունքը հավերժական է, ինչպես որ հավերժական են՝ համաշխարհային կարգը, Աստվածը, բնությունը. մարդը ոչ միայն դրա ստեղծագործողը չէ, այլև չի կարող այն որևէ կերպ փոփոխել, առավել ևս՝ վերացնել, քանի որ բնական իրավունքի աղբյուրը՝ անչափելիորեն բարձր է մարդուց, հետևապես՝ բնական իրավունքի գոյությունը, գործառնությունը կախված չէ հանրային իշխանության ինստիտուտներից¹:

Եվրոպական առանձին պետությունների Մահմանադրություններում մարդու հիմնական իրավունքները նույնպես հռչակվում են որպես անօտարելի: Այսպես՝ Գերմանիայի հիմնական օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ մարդկային արժանապատվությունն անձեռնմխելի է: Այն հարգելն ու պաշտպանելն ամբողջ պետական իշխանության պարտականությունն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գերմանացի ժողովուրդն այդ պատճառով ճանաչում է մարդու անխախտելի և **անօտարելի իրավունքները**, որպես յուրաքանչյուր մարդկային համակեցության, աշխարհում խաղաղության և արդարության հիմք (ընդգծումը՝ Ա. Ղ.): ՌԳ Մահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու հիմնական իրավունքները և ազատություններն անօտարելի են և յուրաքանչյուրին պատկանում են ծննդյան ուժով:

Երբեմն հիմնական իրավունքների անօտարելիության պահանջը շփոթում

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2018 1 - 2 (223-224)

ՂԱՄԱՐՅԱՆ
Իշխանություն



են իրավունակության անօտարելիության հետ: Նախապես նշենք, որ մեր կարծիքով սուբյեկտիվ իրավունքը և իրավունակությունը տարբեր կատեգորիաներ են, ուստի սույն աշխատանքում պարզապես փաստենք, որ մարդու իրավունակությունն անկասկած անօտարելի է, քանի որ այն մարդու ասկրեպտիվ կարգավիճակի տարրերից է: Եթե ելնենք այն հիմնարար գաղափարից, որ մարդը բարձրագույն իրավական արժեք է, ապա իրավունակությունը սկզբունքորեն անօտարելի է, քանի որ կազմում է իրավական անձի հիմքը: Ընդ որում՝ անձի իրավունակության անօտարելիության սկզբունքը տարածվում է հենց մարդու՝ որպես իրավունքի սկզբնական սուբյեկտների վրա: Իրավաբանական անձն իրենց լուծարման կամ վերակազմակերպման դեպքում ապացուցում են իրենց իրավունակության օտարելի լինելու հանգամանքը²:

Իրավունքը ենթակա չէ օրարման իրավաբանության թե՛ հանրային իշխանության կողմից: Մարդու իրավունքների անօտարելի լինելու պահանջը ո՞ւմ է հասցեագրված՝ հանրային իշխանությանը մարմիններին (այսուհետ՝ պետությանը, իրավունքի հասցեատիրոջը), թե իրավատիրոջը (իրավունքի կրողին): Եթե «անօտարելի իրավունք» հասկացությունը մեկնաբանենք այնպես, որ այն հասցեագրված է իրավատիրոջը, ուստի մարդը չի կարող ինքն իրենից օտարել իր իրավունքները, այսինքն՝ չի կարող հրաժարվել իր հիմնական իրավունքներից: Իսկ եթե «անօտարելի իրավունք» հասկացությունը մեկնաբանենք այնպես, որ պետությունը չի կարող մարդուց օտարել բնության ուժով նրան տրված իրավունքները, ապա պետությունը չի կարող սահմանափակել մարդու բնական իրավունքները (գրկել իրավունքից):

Իրավունքի պատմության և տեսության մեջ «անօտարելի իրավունք» հասկացությունը մեկնաբանվել է երկու իմաստով էլ: Օրինակ՝ Վերջինիայի իրավունքների մասին 1776 թ. հռչակագրում, որն

ընդունված է համարել մարդու իրավունքները պետականորեն բնորոշող առաջին փաստաթուղթը, նշված է. «Բոլոր մարդիկ, ըստ բնույթի, հավասարապես ազատ են և անկախ ու ժողոված են որոշակի բնածին իրավունքներով: Նրանք չեն կարող, որևէ համաձայնագիր կնքելով, իրենց կամ իրենց հաջորդ սերունդներին զրկել այդ իրավունքներից»³: Հռչակագրի ձևակերպումից բխում է, որ մարդը, որևէ համաձայնագիր կնքելով չի կարող ինքն իրեն զրկել բնական իրավունքներից, այսինքն՝ հրաժարվել դրանից: Այս փաստաթղթում մարդու իրավունքների անօտարելիության առաջին հասցեատերն իրավունքի կրողն է, ում արգելվում է հանրային իշխանության հետ համաձայնություն կնքելով, հրաժարվել իր իրավունքներից:

Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանից սկսած «անօտարելի», «բնածին» մարդու իրավունքները հաստատում էին, որ իրավունքը գոյություն ունի մինչև և անկախ պոզիտիվ իրավունքով (օրենքով) սահմանելը: Այն, որ նրանք անկատելի են նույն է, որ նրանք անօտարելի են, այսինքն՝ մարդուն ոչ որևէ երբևէ չի կարող զրկել այդ իրավունքներից, ինչպես նաև մարդը իրավունք չունի հրաժարվել դրանցից⁴:

Ինչպես նշվեց՝ ռուսական Սահմանադրության մեջ ուղղակիորեն ամրագրված է մարդու իրավունքների անօտարելի լինելու մասին դրույթը: Այս կապակցությամբ մարդու իրավունքների տեսության վերաբերյալ ռուսական դասագրքերից մեկում կարդում ենք. «Բնական իրավունքի հայեցակարգի հիմնական գաղափարն այն է, որ մարդու իրավունքները և ազատությունները նրան են պատկանում այն բանի ուժով, որ նա մարդ է, իր մարդկային բնույթի ուժով: Այդ իրավունքները նրա բնույթի էությունն են, դրա համար էլ անվանում են բնական: Մարդու բնական իրավունքները գոյություն ունեն օբյեկտիվորեն և կախված չեն կոնկրետ մարդու՝ այն կրողի կամքից և ցանկությունից: Մարդու բնական իրավունքները և ազա-



տություններն անօտարելի են և յուրաքանչյուրին պատկանում են ծնունդով: Մարդը քանի դեռ կենդանի է, նա անխզելիորեն կապված է իր իրավունքների և ազատությունների հետ, նրանք չեն կարող որևէ կերպ և որևէ մեկի կողմից օտարվել: Իհարկե, **իշխանությունը կարող է սահմանափակել մարդու այդ իրավունքները**, կոպիտ կերպով խախտել դրանք, սակայն **ի վիճակի չէ դրանք խլել մարդուց: Մարդը նույնպես չի կարող հրաժարվել իր անօտարելի իրավունքներից, չկորցնելով իր մարդկային էությունը:** Չի կարելի հրաժարվել իր բնական իրավունքներից՝ կյանքի իրավունքից, մտքի և խոսքի ազատությունից, դավանանքի ազատությունից և այլն: Մարդու բնական իրավունքները ինքնապահպանման և զարգացման յուրօրինակ նորմեր են»⁵ (Ընդգծումը՝ Ա.Ղ.): Այս աշխատությունում իրավունքների անօտարելիության պահանջը հասցեագրված է ինչպես պետությանը, այնպես էլ հիմնական իրավունքը կրողին (իրավատիրոջը), ով չի կարող հրաժարվել իր իրավունքներից:

Ռուսական մեկ այլ դասագրքում իրավունքների անօտարելիության պահանջն հասցեագրված է միայն իրավատիրոջը. «Ռուսաստանի հիմնական օրենքն այն է, որ պետությունը մարդկանց հիմնական իրավունքներ, այսինքն՝ սահմանադրական իրավունքներ և ազատություններ, չի նվիրում, չի տրամադրում: Դրանք մարդկանց պատկանում են ծննդյան պահից: **Մարդու անօտարելի** իրավունքները և ազատությունները չեն կարող ձեռք բերվել և չեն կարող փոխանցվել, այդ իսկ պատճառով դրանցից **հրաժարվելն անվավեր է**» (ընդգծումը՝ Ա. Ղ.)⁶: Մինչդեռ Բ. Էբզեկը կարծում է, որ մարդու իրավունքների անօտարելիությունն նշանակում է, որ պետությունը փոխկապակցված է դրանցով և չի կարող իր հայեցողությամբ վերացնել կամ սահմանափակել մարդու իրավունքները կամ ազատությունները⁷: Սահմանադրագետը մարդու իրավունքների անօտարելիության պահանջի հաս-

ցեատեր է համարում պետությանը, ով չի կարող իր հայեցողությամբ սահմանափակել մարդու իրավունքները:

Ինչպես նշվեց՝ Գերմանիայի հիմնական օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում նույնպես նշված է մարդու իրավունքների անօտարելի լինելու մասին դրույթ: Գերմանական սահմանադրական իրավունքում հիմնական օրենքի 1-ի հոդվածի 2-րդ մասի «անօտարելի» ձևակերպումը մեկնաբանվում է այնպես, որ մարդու իրավունքները սկզբունքորեն անօտարելի են, դրանք առանց սահմանափակման պարտադիր են ցանկացած պետական իշխանության (մարմինների) համար, ոչ ոք չի կարող հրաժարվել իրավունքից այն հիմքով (իմաստով), որ նա (անձը) գիշում է իրավունքը միակողմանի կամաարտահայտությամբ կամ պայմանագրով⁸: Մինչև նույն ժամանակ նշվում է, որ հիմնարար իրավունքի իրականացումից հրաժարվելը հնարավոր է եզակի դեպքերում, եթե անձն իրավունքից հրաժարվելու մասին տալիս է կամավոր և գիտակցված համաձայնություն (համաձայնության մեջ պետք է նշվի անձի մասին տվյալներ, տարիքը և հոգեկան վիճակը, ինչպես նաև հրաժարման նշանակությունը (պատճառը) և ծավալները): Այնուհետև իրավունքից հրաժարումը կոնկրետ դեպքի համար կլինի վերջնական և անըրջադարձ⁹: Ընդ որում՝ գերմանական Սահմանադրության մեկնաբանություններում «անօտարելի» հասկացության վերաբերյալ արտահայտվել է նաև այլ մոտեցում, մասնավորապես՝ նշվում է, որ «անօտարելի իրավունք» ձևակերպումը որևէ կապ չունի հիմնական իրավունքներից հրաժարվելու հարցի հետ¹⁰: Անօտարելիությունը նշանակում է, որ ոչ ոք չի կարող ի սկզբանե մարդու իրավունքների կարգից դուրս դրվել, և որ յուրաքանչյուր ոք, անկախ իր կարգավիճակից ու վարքից, սկզբունքորեն տարրական իրավունքների սուբյեկտ է ու պետք է մնա սուբյեկտ¹¹:

Մի փոքր շեղվենք բուն հարցից և մեջբերենք Ս. Կորոյլովի հոդվածը, որտեղ



հեղինակը նշում է, որ Գերմանիայի սահմանադրական դատարանը հիմք է ընդունում իրավունքից հրաժարվելու երկու տեսություն՝ «սուբյեկտիվ տեսությունը» և «օբյեկտիվ տեսությունը»: Իրավունքներից հրաժարվելու «սուբյեկտիվ տեսությունը» սկիզբ է առել 1919 թ. Վայմարյան Սահմանադրությունից, որը հիմնական իրավունքներից անհատական հրաժարումը դիտում էր դրա կիրառման ձևաչափով: Իրավունքներից հրաժարվելու «օբյեկտիվ տեսությունը», առավել համապատասխանում է 1949 թ. Գերմանիայի հիմնական օրենքի ոգուն: Այս տեսության համաձայն՝ հիմնական իրավունքները դիսպոզիտիվ չեն, որից իրավատերը կարող է իր հայեցողությամբ հրաժարվել: Գերմանիայի սահմանադրական դատարանի կարծիքով այս տեսություններից որևէ մեկը ունիվերսալ չէ, դրանցից յուրաքանչյուրն ունի առավելություններ և թերություններ, որոնք կարելի է պարզել կոնկրետ գործի վերլուծության շրջանակում: «Սուբյեկտիվ տեսությունը» կիրառելի չէ այնպիսի իրավունքների նկատմամբ ինչպիսիք են՝ մարդու արժանապատվության իրավունքը (Հիմնական օրենքի 1-ին հոդված), գործողությունների ընդհանուր ազատության իրավունքը (Հիմնական օրենքի 2-րդ հոդված), ընդհանուր հավասարության սկզբունքը (Հիմնական օրենքի 3-րդ հոդված): Այս դեպքում «օբյեկտիվ տեսության» անասանությունը կասկածի տակ չի կարող դրվել: Միևնույն ժամանակ, «սուբյեկտիվ տեսությունը» առավել ճկուն է լուծում այնպիսի հարցեր ինչպիսիք են՝ մասնագիտություն ընտրելու ազատությունից անհատի հրաժարվելը: Սկզբունքորեն «սուբյեկտիվ տեսությունը» միանգամայն կիրառելի է որոշ «ազատության իրավունքներին» նկատմամբ (Freiheitsrechte), օրինակ՝ ժողովների ազատությունը, միավորումներ ստեղծելու ազատությունը և այլն: Իհարկե, գոյություն ունեն ոլորտներ, որտեղ բախվում են տարբեր հիմնական իրավունքներ, և այդտեղ ակնհայտ

չէ, թե որ տեսությունն է գերակայում: Օրինակ՝ մասնագիտական ինքնորոշման ազատությունը, այսինքն՝ մասնագիտություն ընտրելու իրավունքը, օրինակ՝ ավտովագորդ կամ մանրէաբան մասնագիտության ընտրությունը, միաժամանակ նշանակում է անհատի համաձայնությունը՝ կյանքի համար ստեղծել մասնագիտական ռիսկ, որը, առնվազն, ներառում է սահմանադրաիրավական իմաստով կյանքի իրավունքից հրաժարում: Ակնհայտ է, որ հիմնական իրավունքների և ազատությունների դոգմատիկական չի կարող մոտենալ այս հարցերին՝ առանց զարգացած դատական համակարգի: Այս հարցերում գործում է «*judex primus est*» կանոնը, (դատավորն առաջնային է, այսինքն՝ դատավորն ունի հարցը լուծելու առաջնային իրավունք) իսկ իրավագետները կարող են կատարել միայն «Միևնույն խավարում թռչող բուերի» գործառույթը¹²:

Ամփոփելով այս մեջբերումները, կարելի է եզրակացնել, որ իրավունքների անօտարելիության պահանջի հասցեատերերն են՝ ինչպես պետությունը, այնպես էլ իրավունքի կրողին:

Ո՞ր հիմնական իրավունքներն են անօտարելի: Եթե նույնիսկ ընդունենք, որ հիմնական իրավունքների անօտարելի լինելու մասին պահանջը սահմանափակում է մարդու՝ իր իրավունքներից հրաժարվելու ունակությունը, ապա պետք է նշել, որ հստակ չէ, թե անօտարելիության վերաբերյալ պահանջը ո՞ր իրավունքներին է վերաբերում՝ անօտարելի են սահմանադրությամբ ամրագրված բոլոր իրավունքները, թե՞ կոնկրետ իրավունքները:

Մարդու անօտարելի իրավունքների համակարգի մասին իրավունքի պատմության մեջ և արդի իրավունքում միասնական մոտեցում չկա: Այս հարցի վերաբերյալ համեմատական սահմանադրական իրավունքի դասագրքում նշվում է. «Մարդու անօտարելի իրավունքների թվին են սովորաբար դասվում կյանքի իրավունքը, ազատությունը, անվտանգու-



քյունը, սեփականությունը, ֆիզիկական և հոգևոր անձեռնմխելիությունը, մարդու արժանապատվությունը, մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը և այլն: Վերջին ժամանակներում այս ցանկում ավելացվում են նաև «երրորդ» և «չորրորդ» սերնդի իրավունքները, օրինակ՝ մարդու շրջակա միջավայրի օգտագործման իրավունքը: Նրանցից ոմանք դիտարկվում են ոչ միայն որպես անհատական բնական իրավունքներ, այլև կոլեկտիվ բնական իրավունքներ: Համարվում է, որ պետական իշխանությունը իր ակտերով կամ գործողություններով այդ իրավունքները չի կարող շնորհել կամ օտարել: Դրանք «բնածին» իրավունքներ են¹³: «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասում կանանց աշխատանքի իրավունքը դիտվում է որպես անօտարելի իրավունք¹⁴:

Ս. Ավագյանը նշում է, որ հիմնական իրավունքների թվին պատկանում են ոչ միայն բնական իրավունքները, այլև հետագայում ծագած այլ իրավունքներ և ազատություններ, այդ թվում, այն իրավունքները, որոնք բնութագրում են մարդուն ոչ միայն որպես անհատ, այլև քաղաքացի: Հիմնական իրավունքների և ազատությունների ամբողջական ցանկը ձևավորվում է համաշխարհային հանրության կողմից և արտացոլվում են միջազգային փաստաթղթերում: Հետևապես՝ զուտ վերացական հարցից, թե որոնք են մարդու բնական կամ հիմնական իրավունքները և ազատությունները, պետք է անցում կատարել առավել կոնկրետի՝ դրանցից, որոնք են համաշխարհային հանրությունը ճանաչում որպես գլխավորը¹⁵:

«Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մասին» ֆրանսիական հռչակագրում՝ որպես անօտարելի սրբազան իրավունք է ներկայացվում նաև սեփականության իրավունքը: Սեփականության իրավունքի անօտարելի լինելու

մասին գաղափարն այնքան ազդեցիկ է, որ այն իր ներգործության ուժը պահպանել է նաև 21-րդ դարում: Ավելին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 25.02.2014 թ. ՍԴՈ-1140 որոշման մեջ օգտագործում է «Սեփականատիրոջ **անօտարելի իրավունքը**՝ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրեն պատկանող գույքը» ձևակերպումը (ընդգծումը՝ Ա. Ղ.): Համեմատական սահմանադրական իրավունքի ռուս մասնագետներն այս կապակցությամբ արդարացիորեն նշում են, որ սեփականության իրավունքի «բնական» բնույթի մասին սահմանադրաիրավական առասպելն այնքան գայթակղիչ էր, որ սեփականության իրավունքի «բնական» լինելու գաղափարը հերքող որևէ պատմական և պատմաիրավական հետազոտություն չկարողացավ այն դարձնել միայն անցյալի արժանիքը¹⁶:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ սահմանադրական իրավունքի գիտության մեջ և պրակտիկայում բացակայում է «անօտարելի» իրավունքների հստակ համակարգ:

Հայկական իրականություն: ՀՀ Սահմանադրության 1995 թ. և 2005 թ. խմբագրություններում բացակայել է մարդու իրավունքների անօտարելիության մասին որևէ դրույթ կամ ձևակերպում: 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության համաձայն՝ **մարդու անօտարելի** արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է (ընդգծումը՝ Ա. Ղ.): ՀՀ Սահմանադրության տեքստում անօտարելի է դիտվել միայն մարդու արժանապատվությունը: Դրանով ՀՀ Սահմանադրությունը ելնում է այն կանխադրույթից, որ արժանապատվությունը մարդուն ներհատուկ է հենց նրա գոյության փաստով: Մարդը հիմնական իրավունքների կրող է իր արժանապատվության ուժով: Արժանապատվությունը մարդու իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Քանի որ մարդու արժանապատվու-



բյուրը բոլոր հիմնական իրավունքների և ազատությունների աղբյուրն է, դրանց անբակտելի հիմքը, ապա «հիմնական իրավունքները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն՝ ելնելով արժանապատվության սկզբունքից և այն իրականացնելու նպատակով»¹⁷:

Թեև սահմանադրական տեքստում չի օգտագործվում «անօտարելի իրավունք» ձևակերպումը, սակայն ՀՀ իրավական մի շարք ակտերում առկա է նման ձևակերպում: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը և ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով միջազգային իրավական փաստաթղթերը, իրավական դիրքորոշումներում հաճախ գործածում են «անօտարելի իրավունք» հասկացությունը: ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայում որպես անօտարելի իրավունք (արժեք) են դիտարկվում՝ կյանքի իրավունքը, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, դատական պաշտպանության իրավունքը, խոշտանգման բացարձակ արգելքից բխող իրավունքները: Այսպես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 13.11.1998 թ. ՍԳՈ-138 որոշման մեջ նշվում է. «Ելնելով միջազգային իրավունքի նորմերից և սկզբունքներից, առաջնային համարելով **մարդու անօտարելի իրավունքները** և հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի երկրորդ մասը, առանց բացառության, ամրագրում է յուրաքանչյուր մարդու՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը, ՀՀ Սահմանադրությունն այդ իրավունքի սահմանափակման հնարավորություն է նախատեսել միայն Սահմանադրության 45-րդ հոդվածի հիմքերով» (ընդգծումը՝ Ա. Ղ.):

ՀՀ Սահմանադրական դատարանի 15.07.2003 թ. ՍԳՈ-437 որոշման մեջ նշվում է. «ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող իրավունքների համակարգում

նշված է նաև կյանքի իրավունքի պաշտպանությունը: Սահմանադրությունը, այս իրավունքը դիտելով որպես բացարձակ և **անօտարելի**, իր 45-րդ հոդվածում նշում է, որ ոչ մի դեպքում կյանքի իրավունքը չի կարող սահմանափակվել» (ընդգծումը՝ Ա. Ղ.):

ՀՀ վճռաբեկ դատարանի 31.10.2008 թ. քիվ ԱՎԴ/0022/06/08 գործով նշել է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում է **անօտարելի և բարձրագույն արժեք** (ՀՀ սահմանադրության 3-րդ հոդված): ՀՀ վճռաբեկ դատարանը 11.05. 2011 թ. քիվ ԵԿԴ/0281/01/10 գործով նշել է, որ խոշտանգման արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է նաև, որ ենթադրյալ խոշտանգման փաստով պատշաճ քննության իրականացումը, որպես մարդու հիմնարար իրավունք, **անօտարելի հանրային-իրավական արժեք է**, և անձը չի կարող իր կամարտահայտությամբ դրանից հրաժարվել (ընդգծումը՝ Ա. Ղ.):

ՀՀ վճռաբեկ դատարանը 05.12.2012 թ. քիվ ԵԿԴ/0066/11/12 գործով նշել է, որ իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքն **անձի անօտարելի իրավունքներից մեկն է** և միաժամանակ այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց ու երաշխիք է (ընդգծումը՝ Ա. Ղ.):

Առանձին հայ իրավաբաններ նշում են, որ բացակայում կամ առնվազն բավարար չեն տեսակետները, որոնք հնարավորություն կտան հասկանալու, թե որն է պատճառը, որ մարդու իրավունքները որակվում են որպես անօտարելի, եթե հատկապես հաշվի առնենք, որ գոյություն ունեն նաև մարդու իրավունքների



իրավաչափ սահմանափակման սահմանադրական և օրենսդրական այլ մեխանիզմներ¹⁸:

Անճնակյան Ակադարումներ: Ինչպես նկատում են ենք «անօտարելի իրավունք» ձևակերպումը բնական իրավունքի տեսության հասկացություններից է, որը Եվրոպական լուսավորականության մեծ մտածողները առաջադրեցին որպես բացարձակ պետական իշխանության սահմանափակման միջոց: Տվյալ ժամանակահատվածում, նկատի ունենալով նաև ճորտատիրական կարգերում ձևավորված մարդու խոցելի վիճակը և նրա կախվածությունը պետական և եկեղեցիական իշխանությունից, մի շարք փաստաթղթերում (օրինակ՝ «Վերջինիայի իրավունքների մասին» 1776 թ. հռչակագրում) նշվեց, որ մարդը չի կարող համաձայնագիր կնքելով հրաժարվել իր կամ հաջորդ սերունդների բնական իրավունքներից: Հետադարձ հայացքով հարցը դիտարկելիս, կարելի է նշել, որ տվյալ պատմական ժամանակահատվածում ճորտատիրական հոգեբանություն ունեցող մարդու համար իրավունքից հրաժարվելու արգելքը լիովին արդարացված էր, քանի որ մնան հրաժարումը «apriori» չէր կարող համարվել կամավոր և գիտակցված: Իսկ իրավունքից հարկադրաբար կամ չգիտակցված հրաժարումը իրավունքից հրաժարում չէ: Փոքր-ինչ այլ առիթով Լ. Դյուգլան նշում էր, որ հեղափոխական դարաշրջանում սահմանադրության և իրավունքների հռչակագրի հիմնադիրների և այլ հրապարակախոսների սխալն այն էր, որ նրանք անհատապաշտական (ինդիվիդուալիստական) դոկտրինը դիտում էին և դիտում են որպես անձեռնմխելի և վերջնական դոգմա, որը ճշմարիտ է բոլոր ժամանակների և երկրների համար, մինչդեռ դրանք փոփոխվող պատմական գաղափարներ և ինստիտուտներ են¹⁹:

Ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունում «անօտարելի իրավունք» ձևակերպումը կորցրել է իր արժեքայնությունը, քանի որ՝

Առաջին՝ նոր սերնդի սահմանադրություններում պետություններին տրվել է մարդու իրավունքները սահմանափակելու հնարավորություն: Օրինակ՝ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության մեջ մարդու իրավունքներն ամրագրող հոդվածներն իրավական տեխնիկայի տեսանկյունից ձևակերպված են այնպես, որ հոդվածների առաջին մասում ամրագրված է մարդու կոնկրետ իրավունքը, իսկ մույն հոդվածի հաջորդ մասում ամրագրված է այդ իրավունքը սահմանափակելու մասին դրույթը: Այլ կերպ ասած՝ պետությունը, մարդու իրավունքները սահմանափակելով, կոնկրետ դեպքում կարող է օտարել այդ հիմնական իրավունքների բացարձակ մեծամասնությունը (բացառությամբ՝ առանձին իրավունքների, օրինակ՝ խոշտանգումների արգելքը)²⁰:

Երկրորդ՝ ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունում ապրող գիտակից մարդը, ով օժտված է ինքնավարության բարձր աստիճանով, հնարավորություն ունի որոշելու ինչպես տնօրինել իր իրավունքները, այդ թվում՝ օգտվել դրանցից, թե ոչ: Այլ կերպ ասած՝ իր կյանքի և ճակատագրի նկատմամբ ինքնիշխանությամբ օժտված մարդը կարող է հրաժարվել իր իրավունքներից (բացառությամբ այն դեպքերի, երբ մնան հրաժարումը արգելված է կամ հակասում է այլ սուբյեկտների իրավունքներին կամ հանրային շահերին):

Մեր ընդդիմախոսները կարող են նշել, որ հիմնական իրավունքների անօտարելիության մասին պահանջը վերաբերում է ոչ թե կոնկրետ իրավահարաբերությունների շրջանակում կոնկրետ սուբյեկտի կողմից իր իրավունքից հրաժարվելու կամ պետության կողմից այդ իրավունքը սահմանափակելու արգելքին, այլև հասարակության (ժողովրդի) կողմից իրենց՝ որևէ հիմնական իրավունքը պոզիտիվ իրավունքում ամրագրելուց հրաժարվելու անբույլատրելիությանը (այլ կերպ ասած՝ բնական իրավունքի պետական



ճանաչումից հրաժարվելու անթույլատրելիությանը): Այսպես՝ բնական իրավունքների անօտարելիությունը նշանակում է, որ հասարակությունը չի կարող՝ 1) համաձայնություն տալ այն մասին, որ հրաժարվում է մարդու այս կամ այն իրավունքը պոզիտիվ իրավունքում ամրագրելու հնարավորությունից (պահանջից), կամ 2) համաձայնություն տալ պետությանը, օրենսդրական փոփոխություններով կատարելով, վերացնելու պոզիտիվ իրավունքում արդեն իսկ ամրագրված մարդու հիմնական իրավունքը: Օրինակ՝ բազմազգ պետությունում բնակվող ազգային փոքրամասնությունը, իրավունքների անօտարելիության ուժով, չի կարող համաձայնություն տալ այն մասին, որ հրաժարվում է ինքնորոշման իրավունքի պետական ճանաչումից կամ համաձայն է, որ պետությունը վերացնի պետականորեն ճանաչված (ամրագրված) իրավունքը:

Կարծում ենք՝ նույնիսկ «անօտարելի իրավունք» հասկացության մասն մեկնաբանության դեպքում, միևնույն է, այս հասկացությունն արդի պայմաններում չունի էական գործնական նշանակություն: Եթե, օրինակ, որևէ ազգային փոքրամասնություն, որպես կոլեկտիվ իրավունքի կրող²¹, էլնելով որոշակի օգտապաշտական (ուտիլիտարիստական) նկատառումներից, միասնական, հստակ և գիտակից որոշում է կայացնում այս կամ այն իրավունքից հրաժարվելու մասին (իրավունքի պետական ճանաչումից հրաժարվել), ապա իրավունքից մասն հրաժարումը թույլատրելի է: Ավելին, սահմանադրական պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ սահմանադրական փոփոխությունների համատեքստում հասարակությունը, կողմ քվեարկելով փոփոխված սահմանադրության նախագծին, հրաժարվում է սահմանադրության մեջ ամրագրված հիմնական իրավունքից: Օրինակ՝ 2015 թ. ՀՀ սահմանադրական հանրաքվեի ժամանակ հայ ժողովուրդը կողմ քվեարկե-

լով կիսանախագահական կառավարման ձևից պառլամենտական կառավարման ձևին անցում կատարելու մասին սահմանադրության նախագծին, ըստ էության, հրաժարվեց հանրապետության նախագահին ուղղակի կարգով ընտրելու իրավունքից: Համեմատության համար նշենք, որ Ճնապոնիայի Սահմանադրության 15-րդ հոդվածում հանրային պետական ծառայողներին ընտրելու իրավունքը դիտվում է որպես ժողովրդի անօտարելի իրավունք:

Այս կապակցությամբ տեղին է մեջբերել Գ. Գաջիևի հետևյալ միտքը. «Կանտի աշխատանքներում կարելի է գտնել իրավունքների անօտարելիության մասին սահմանադրական խոսքերի սկզբնական իրավաբանական իմաստը: Պարզվում է, որ իրավունքների անօտարելիությունը, դա նաև այն է, որ մարդն իրավունք չունի նույնիսկ որյզն-ինչ չափով պետությանը զիջել իր բնական իրավունքները: Կանտի խոսքերը, որ «յուրաքանչյուր մարդ ունի անօտարելի իրավունքներ, որոնցից չի կարող հրաժարվել, եթե նույնիսկ նա ցանկանա», շատ արդիական են: Չի կարելի զիջել ընտրական իրավունքը, ինչպես նաև չի կարելի զիջել, այսպես կոչված, «մասնակցության իրավունքների» խմբին պատկանող որևէ այլ իրավունք (ՌԴ քաղաքացիները իրավունք ունեն մասնակցելու պետական կառավարմանը, ինչպես անմիջականորեն, այնպես էլ իրենց ներկայացուցիչների միջոցով (ՌԴ Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մաս)»²²: Եթե ընտրելու իրավունքն անօտարելի է, ապա ինչպե՞ս հայ ժողովուրդը որոշակի իմաստով հրաժարվեց այդ իրավունքից:

Ինչ վերաբերում է պոզիտիվ իրավունքում ամրագրված սուբյեկտիվ իրավունքից կոնկրետ անձի կողմից ընդհանրապես հրաժարվելուն (այս իրավիճակ չպետք է շփոթել իրավունքի պետական ճանաչումից հրաժարվելու՝ վերը նկարագրվածի հետ), ապա, կարծում ենք, որ մարդը սուբյեկտիվ իրավունքից կարող

է հրաժարվել ոչ թե ընդհանրապես, այլ կոնկրետ իրավահարաբերության շրջանակում: Անթույլատրելի է ընդհանրապես հրաժարվել, օրինակ՝ սեփականության իրավունքից կամ դատական պաշտպանության իրավունքից²³:

Մի քանի խոսք «անօտարելի իրավունք» ձևակերպումից հրաժարվելու վտանգների մասին: Կանխավ փարատենք այն մտավախությունը, որ օրենսդրության մեջ «անօտարելի իրավունք» ձևակերպումից հրաժարվելու դեպքում հանրային իշխանությունը հնարավորություն կունենում մարդուն դարձնելու իրավագուրկ, իսկ մարդը (հասարակությունը), ինքն իրեն ստրկացնելու նպատակով, հնարավորություն կունենան անսահմանափակ ծավալով հրաժարվել իր իրավունքներից: Բանն այն է, որ նման վտանգների մասին կարելի է խոսել միայն հակաիրավական պետական ռեժիմների դեպքում, որտեղ նույնիսկ իրավունքների անօտարելի լինելու մասին պահանջը ավտորիտար իշխանությանը զսպող օղակ չէ, մինչդեռ քաղաքակիրթ

հանրային իշխանությունը կաշկանդված է մարդու իրավունքների սահմանափակման իրավական ընթացակարգերով և չունի բացարձակ հայեցողություն: Մարդու կողմից իր իրավունքներից հրաժարվելը նույնպես ունի իրավաչափության պայմաններ, որոնցից դուրս իրավունքից հրաժարումն անթույլատրելի է:

Այսպիսով, եթե մի կողմից պետությունը կարող է օտարել մարդու իրավունքները՝ սահմանափակելով դրանք, մյուս կողմից՝ մարդը կարող է իրենից օտարել իր իրավունքները՝ հրաժարվելով դրանցից, ապա նման պայմաններում կարող ենք ասել, որ «անօտարելի իրավունք» ձևակերպումը վերածվել է իրավական առասպելի, ավելին՝ խաբկանքի: Կարծում ենք, որ «անօտարելի իրավունք» ձևակերպումը պետք է գործածել որպես իրավունքի պատմության և իրավական գաղափարախոսության հասկացության ապարատի մաս, բաց ոչ պոզիտիվ իրավունքում ամրագրված պաշտոնական նորմատիվ պահանջ:

¹ Михайлов А. М., Актуальные вопросы теории правовой идеологии и методологии юриспруденции, М., Юрлитинформ, 2016, с. 130.
² Архипов С. И., Субъект права: теоретическое исследование, СПб.: Издательство Р. Асланова «Юридический центр Пресс», 2004, с. 37.
³ Общая теория прав человека. Отв. ред. Е.А. Лукашева, М., Норма, 1996. <http://lawdiss.org.ua/books/a1927.doc.html> (01.10.2017).
⁴ Кацапова И. А., Философия права П.И. Новгородцева, М., ИФ РАН, 2005, с. 64-65.
⁵ Конституционные права и свободы человека и гражданина в Российской Федерации. Учебник. Под ред. О.И. Тиунова, М., Изд. НОРМА, 2005, с. 3.
⁶ Конюхово И. А., Конституционное право Российской Федерации. *Общая* часть. Курс лекций, М.: Изд. Городец, 2006, с. 592.
⁷ Эбзеев Б. С., Личность и государство в России: взаимная ответственность и конституционные обязанности, М., Норма, 2007, с. 121.
⁸ Hillgruber JÖR 54 (2006), 57 (72 f.)

⁹ Hillgruber JÖR 54 (2006), 57 (73); aA – Widerruflichkeit erforderlich – v.MKS/Starck GG Art. 1 Rn. 135.
¹⁰ Օրինակ՝ Höfling, in: Sachs, GG Art. 1 Rn. 79; Kunig, in: v. Münch/Kunig, Art. 1 Rn. 43; Dreier, in: Dreier I, Art. 1 II Rn. 21; Herdegen, in: Maunz/Dürig, Art. 1 Abs. 2 Rn. 23.
¹¹ Höfling, in: Sachs, GG Art. 1 Rn. 78.
¹² Королев С. В., Действие основных прав по горизонтали и отказ от основных прав. Труды Института государства и права РАН. № 6/2008 М.: 2008. <http://www.igpran.ru/trudy/vypuski/2008/2008-6/78-87.pdf> (01.10.2017).
¹³ Сравнительное конституционное право. 2-е изд. Отв. ред. Чиркин В. Е. М.: Международные отношения, 2002, с. 133.
¹⁴ ՀՀ-ում ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 13.10.1993 թ.:
¹⁵ Авакьян С. А., Конституционное право России. В 2 т., Т. I, М.: Юристъ, 2005, с. 503.
¹⁶ Конституционное (государственное) право зарубежных стран, Отв. ред. Страшун Б. А. Тома 1-2, Часть общая, 3-е изд. М., БЕК, 2000, с. 101-102.



¹⁷ Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, Եր., Տիգրան Մեծ, 2016, էջ 26:

¹⁸ Մուրադյան Մ. Հ., Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր, Եր., 2016, Մաս 1, էջ 87:

¹⁹ Дюги Л., Конституционное право, Общая теория государства, Перевод А. Ященко, В. Краснокутского и Б. Сыромятникова, М., 1908, с. 676.

²⁰ «Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով» (Մեծ պալատի 01.06.2010 թ. որոշում) Եվրոպական դատարանի դատավոր Կալաջինն իր տարբերվող կարծիքում նշել է, որ այս որոշումը, հակառակ արդար դատաբանության, ճանապարհ է բացում մեղադրյալի նկատմամբ հարկադրանք կիրառելու և

դրա արդյունքներն օգտագործելու համար: Аветисян Г., Дело Гефгена: открытый путь к переосмыслению нарушений ст. 3. European Human Rights Advocacy Centre. 3(3), 2008, P. 9.

²¹ Կոլեկտիվ իրավունքից հրաժարվելու դեպքում պետք է ստուգել նաև կոլեկտիվը ներկայացնող սուբյեկտի պատշաճ լինելը:

²² Гаджиев Г. А., Онтология права: (критическое исследование юридического концепта действительности): монография М., Норма: ИНФРА-М, 2016, с. 51.

²³ Գամբարյան Ա., Ավոյան Ք., Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը և իրավաչափության պայմանները, «Օրինականություն», 2016, քիվ 91, էջեր 23-34:



RESUME - РЕЗЮМЕ

INALIENABILITY OF FUNDAMENTAL RIGHTS AND RENOUNCEMENT OF RIGHT (REALITY, MYTH OR FICTION)

Artur Ghambaryan

Head of the Chair of Theory and History of State and Law

Russian-Armenian University

Doctor of Law, Professor

The article deals with the essence of the demand of inalienability of human rights, the scope of the indivisible, inalienable human rights, to whom they are addressed – to the state or the rights holder and whether the person may waive his human rights. The author also considers the respective issues in Armenian legal system.

Keywords: *fundamental rights, inalienable right, renunciation of the right*

НЕОТЧУЖДАЕМОСТЬ ОСНОВНЫХ ПРАВ И ОТКАЗ ОТ ПРАВА (РЕАЛЬНОСТЬ, МИФ ИЛИ ФИКЦИЯ)

Артур Гамбарян

Заведующий кафедрой теории и истории государства и права

Российско-Армянского университета

Доктор юридических наук, профессор

В статье исследованы актуальные проблемы армянской правовой реальности, в частности, права, считающиеся неотъемлемыми, рассматривается необходимость принятия принципа неотчуждаемости прав, конкретизируется, к кому относятся неотчуждаемые права – к государству или правообладателю, а также изучается вопрос, может ли человек отказаться от своих прав.

Ключевые слова: *основные права, неотъемлемое право, отказ от права*

Բանալի բառեր - *հիմնական իրավունք, անօտարելի իրավունք, իրավունքից հրաժարում*

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2018 1 - 2 (223-224)